42. Առ Պրաւտեւս Պատրիկ եւ աշխարհագիր սակս բարեխօսութեան վաճառականի ումեմն ի Մելիտինոյ Եւստափոլ անուն:

43. Առ Հայր Անանիայ:

44. Առ Հայր Աթանէս, յաղագս ոսկի մատանւոյն:

45. Առ Խրախճանս Մայրաքաղաքացի եւ վարդապետք:

46. Առ վարդապետն Սարգիս:

47. Առ Եպիսկոպոսն Կարուց, պատասխանի վասն երթալոյ նորա ի Ս. քաղաքն Աստուծոյ:

48. Յաւուրսն ձմերայնոյ եղեալ ահագին որոտումն յամսեանն Ահեկի որ էր քսաներորդ երրորդ. եւ զայսոսիկ գրեաց ի Գրիգոր Եպիսկոպոսն Մոկաց եւ Մանազկերտոյ սակս եղոյ եւս անձրեւ սաստիկ:

49. Ի Գրիգոր Եպիսկոպոսն Մոկաց վասն շինութեան գղեկի եւ կանգնելոյ մահարձան:

50. Առ նոյն Եպիսկոպոսն Մոկաց վասն ահագին ցրտոյ եւ սառնամանեաց:

51. Պատասխանի Թղթոյն Գագկայ որդւոյն Աշոտոյ, եկեալ վասն ոչինչ իրաց վայրապար զկնի կրօնաւորաց սակս պարտուց ինչ նոցա ի գաւառէն Տարօնոյ:

52. Առ Արքեպիսկոպոսն վասն ձկանց սուղ ինչ իմաստասիրեալ:

53. Առ աշակերտ իւր Եղիսէ Եպիսկոպոս Սեբաստիոյ:

54. Առ Կիրակոս Յոյն դպիր:

55. Առ վարդապետն Սարգիս Առաջնորդ Ս. Խոտին Սեւանայ. քանզի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս եթէ եկեսցես առ իս եւ ի միասին գրոց պարապեսցուք:

56. Առ վարդապետն Սամուէլ, Առաջնորդ Վանիցն Խնատի:

57. Առ կրօնաւոր Խնատին, յորժամ վախճանեցաւ ծերն Սամուէլ:

58. Առ հայրն Սրբոյ Կարապետին:

59. Առ նոյն Հայր Սրբոյ Կարապետին:

60. Առ վարդապետն Գէորգ սակս խնդրոյ մեկնութեան մարգարէին Երեմիայի:

61. Առ ոմն կրօնաւոր Գրիգոր անուն ի գեղջէ Այլարերից:

62. Առ Եպիսկոպոսն Մոկաց եւ Մանազկերտի Պատասխանի Թղթոյն մխիթարութեան:

63. Առ Հայրն Սրբոյ Կարապետին Սարգիս, եւ առ այլ եղբարսն:

64. Պատասխանի Տեառն Պետրոսի Կաթողիկոսին Հայոց մխիթարական թղթին:

65. Առ Արքեպիսկոպոսն է:

66. Առ Արքեպիսկոպոսն է:

67. Առ Եպիսկոպոսն Մոկաց եւ Մանազկերտոյ:

68. Առ Արքեպիսկոպոսն է:

69. Առ Տէր Գրիգոր եւ առ Արքեպիսկոպոսն Ստեփաննոս:

70. Առ Արքեպիսկոպոսն:

71. Առ Հայրն Վարագայ:

72. Նորին առ ոմն:

73. Առ Արքեպիսկոպոսն եւ առ Տէր Գրիգոր:

74. Առ Հնձացին Գրիգոր Տելէտէան:

75. Առ Տէր Գրիգոր:

76. Առ հայրն Կարապետին:

77. Առ Սարգիս Կառավարտիկ Տելէտէս:

78. Առ Հնձացին Գրիգոր Տելէտէս, սակս որոյ եղ ի վանաց եւ չոգաւ ի լեառն Վարագայ:

79. Առ Հնձացին Գրիգոր:

80. Առ Գրիգոր Հնձացին Տելէտէան:

81. Առ ոմն Կրօնաւոր:

Գ. 1. Նորին Գրիգորի Փիլիսոփայի Ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսընկալ:

2. Նորին յաղագս խաչանշան գաւազանին, զոր ընծայեաց Տեառն Պետրոսի Հայոց Կաթողիկոսի, ասացեալ զխորհուրդ խաչին:

3. Հազարտողեան քերթուածք ի խնդրոյ Մանուչէի Հազարացւոյ, հանդերձ յառաջաբանով, որուն սկիզբն է. "Ի չորեքհարիւր եւ իննսուն եւ չորս թուականութեանս Հայոց (1045) լինելոյ իմ Գրիգորի Մագիստրոսի որդի Վասակայ ...."[1]:

Հ. ԻՍԱՀԱԿ ՍՐԱՊԵԱՆ
*Միաբան Անտոնեան:*

# ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

## ՑԱՌԱՋԱԲԱՆ

*Վանայ հարաւային գաւառներէն Կարճկանի-Գաւալի-Մոկաց մէջտեղ ինկող Կարկառ գաւառակի Պէրկրի գեղէն Խոռոջի եւ Յակոբի բերնէն քաղուած է այս դիւցազնավէպը, որի՛ն լեզուին հարազատութեանը կողմէ կրնայ գերազանց համարուիլ ցարդ հրատարակուած բոլոր "Վարիանտ"ներէն: Խոռջօ եւ Յակոբ, երկուքն ալ անգրագէտ, եւ իրենց բնավայրին մէջ մնացած ու մեծցած՝ եւ իրենց նմանները՝ պիտի կրնան ծառայութիւն մը մատուցանել մեր աշխարհիկ բարբառին, բերելով անոր՝ մնայուն կենդանի, ջղուտ, նկարագրի ուժեր՝ ոճի, հնչումի եւ բացատրութեան:*

*Թուրքաց Հայաստանի մէջ, հոգելոյս Սրուանձտեանց Գարեգին Սրբազանէն զատ ոչ ոք հետամուտ եղեր է ցարդ՝ Հայ Ժողովրդական Դիւցազնավէպին, որուն բազմաթիւ տարբերակները* (variante) *քաղեր են, տասնեակ մը տարիէ ի վեր, մեր Ռուսահայ եղբայրներէն՝ անխոնջ բանահաւաքներ: Սակայն անվիճելի է թէ՝ Սասունցի Դաւիթ Դիւցազնավէպը Թուրքաց Հայաստանի ծնունդն է. միայն թէ՝ փոխադրուեր է Կովկասահայերու մէջ՝ Վասպուրականցի եւ Տարօնցի գաղթականներու կամ շրջիկ գուսաններու միջոցով: Այս հիմնակէտով՝ սոյն "վարիանտը" — իմ քաղած երկրորդ (Սպարկերտու բարբառով) "վարիանտէն" յետոյ — կրնայ ծառայել իբր լեզուաքննութեան վստահելի յենակէտ: Երկրորդ "վարիանթս" սակայն, — առանձին հատորով հրատարակելի — պիտի մնայ, կարծեմ, գերադաս նմոյշ՝ հարազատ հայ գաւառաբարբառի:*

*Զ.*

---

[1] Թ. 1 եւ 2 տաղերու հետ ամբողջապէս հրտ. Վենետիկ, 1868. էջք 99:

digitised by A.R.A.R.@